ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2015 թվականի թիվ 192-Ա

2015Թ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ <<ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ <<ԳԻՏԵԼԻՔԻ,ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐ >> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին <<Գիտելիքի, գրի և դպրության օր>> միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 300.0 հազ. դրամ գումարն ուղղել <<Գիտելիքի, գրի և դպրության օր>> միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանին <<Գիտելիքի, գրի և դպրության օր>> միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Կ. Նազարյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

ք. Իջևան

12 հոկտեմբերի 2015թ.